ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 165

ք. Երևան 13.02.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 05028672, հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ Երևանյան շ. 8/3) միջև 25.03.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/5-8 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024թ. 3-րդ եռամսյակում սխալ է մատակարարել 30 հատ արխիվի դարակաշարեր (դարակ մետաղյա 3 հարկանի), 200 հատ կախիչներ (կախիչ պատի 5 կեռ) և 50 հատ նստարաններ (նստարան ծալովի դաշտային), որոնց մասով Ընկերության կողմից մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, որոշում եմ՝ «Պրոֆի Գրուպ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ